Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:

2. Տարեկան ծրագիրը ներառում է տվյալ բյուջետային տարում հաշմանդամության ոլորտում իրականացման ենթակա միջոցառումների, ծրագրերի, գործողությունների ամբողջությունը:

3. Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ դրույթները, ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշումը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված առաջարկությունները:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Ծրագրի նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների բազմակողմանի ներգրավվածության միջոցով:

5. Ծրագրի խնդիրներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության հարցերին առնչվող օրենսդրության կատարելագործումը,

2) հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների ապահովումը,

3) հաշմանդամության սահմանման գործընթացում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների ներդրումը,

4) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը,

5) հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը,

6) հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը մարզական և մշակութային ծրագրերում,

7) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար հիմքերի ստեղծումը,

8) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,

9) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված արդի մոտեցումների, քաղաքականության վերաբերյալ հասարակության իրազեկվածության ապահովումը:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

6. Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և պետական նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանը հասնելու համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովմանը:

7. Աստիճանական քայլեր են իրականացվում ՀՀ օրենսդրությունը և պետական քաղաքականությունը Կոնվենցիայի սկզբունքներին և պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: 2017 թվականի մարտին Հայաստանի Հանապետությունը ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կոմիտեին է ներկայացրել

Կոնվենցիայի պահանջների կատարման վերաբերյալ առաջին հաշվետվությունը: Ներկայումս քննարկվում են Կոմիտեի կողմից արված դիտարկումները հետագա իրավական և գործնական միջոցառումներում հաշվի առնելու նպատակով:

8. Վերանայվում է հաշմանդամության գնահատման համակարգը. աշխատանքներ են իրականացվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման՝ /այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ/ սկզբունքներով անձի կարիքների և կարողությունների բազմակողմանի գնահատման նոր մոդել ներդնելու ուղղությամբ:

9. Իրականացվում են հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանը, նրանց որոշակի խնդիրների լուծմանն ու սոցիալական ներառմանը: Պարբերաբար աշխատանքներ են իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի իրականացման և հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:

10. Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, այդ թվում վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, սեղմիրաններ, քայլակներ, հենակներ, ձեռնափայտներ, օրթոպեդիկ կոշիկներ, պրոթեզի կոշիկներ, կրծքագեղձի պրոթեզներ, գուլպաներ, ձեռնոցներ, սիլիկոնե գուլպաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, լսողական սարքեր, հաշմանդամի սայլակներ և այլն:

11. Պարբերաբար նորացվում են տրամադրվող պարագաների տեխնիկական նկարագրերը, վերանայվում են նաև տրամադրման մեխանիզմները, նախատեսվում է պիլոտ ծրագրով հաշմանդամի սայլակը և 30-ից բարձր տարիքի անձանց և տարիքային կենսաթոշակառուներին տրամադրվող լսողական սարքերը ևս տրամադրել հավաստագրի միջոցով՝ հնարավորություն ընձեռելով անձին ձեռք բերել իր կարիքին առավել հարմար սայլակ կամ լսողական սարք:

12. Շարունակվում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով /Բրայլյան/ գրքերի տպագրության, տետրերի պատրաստման, «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը, որը շահառուներին հնարավորություն է տալիս կարդալու, գրելու, տեղեկատվություն ստանալու, դրանով իսկ ներառվելու հասարակություն:

13. Պարբերաբար իրականացվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման» և «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղե-

կատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ՝ ապահովելով պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման գործընթացի վերահսկելիությունը, ինչպես նաև բարձրացնելով տարբեր ձևաչափերով վերլուծություններ իրականացնելու հնարավորությունը:

14. 2017թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 205166 հաշմանդամություն ունեցող անձ, որից 127682 անձ /62,2%/ աշխատանքային տարիքի են:

15. 2017թ. հունվարի 1-ի դրությամբ Զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված է 2926 հաշմանդամություն ունեցող անձ: Տարվա ընթացքում աշխատանքի է տեղավորվել 990 անձ (որից 764-ը սեզոնային և ժամանակավոր աշխատանքի): Զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկվել է 1060 հաշմանդամություն ունեցող անձ, որը կազմում է հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 40%-ը:

16. Շարունակվում են աշխատանքները ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ. 2016-2017թթ. ուսումնական տարում սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում ներառական կրթություն իրականացնող 208 հանրակրթական դպրոցներում սովորել են 6200 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման հիմքում դրված են ԱՀԿ ՖՄԴ սկզբունքները:

17. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

18. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնումն իրականացվել է հանրապետության տարբեր վերականգնողական կենտրոններում:

19. Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:

20. Կառավարության ուշադրության կենտրոնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնահարցերը: Իրականացվում են աշխատանքներ հոգեկան առողջության ոլորտում համայնքահեն ծառայությունների նոր մոդելների ներդրման, այլընտրանքային ծառայությունների ստեղծման ու պահպանման, առկա ռեսուրսների ու ներուժի հզորացման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական հիմքերի մշակման ուղղությամբ:

21. Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն», «Հույսի կամուրջ», «Լիարժեք կյանք», «Իմ ուղին» և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություններին: Ցերեկային կենտրոններում խնամքի և սոցիալական այլ ծառայությունների մատուցումը նպաստում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, այլև նրանց ընտանիքների անդամների զբաղվածության հարցերի կարգավորմանը: Այս հանգամանքից ելնելով է. որ կառավարությունը տարեցտարի ընդլայնում է նման կենտրոնների գործունեությունը:

22. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորման գործընթացում իր յուրահատուկ և կարևոր դերակատարումն ունի Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը: Հանձնաժողովի նիստերի ընթացքում Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների ներկայացուցիչների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ բազմաթիվ հարցեր, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ դրանց կարգավորման ուղղությամբ:

23. 2017 թվականի հունվարի 12-ի N1 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը»: Այն ոլորտի առաջիկա 5 տարիների սոցիալական ներառման քաղաքա-կանության հիմնական ուղեցույցն է: Համալիր ծրագրով նախատեսված թիրախային ուղղությունները կյանքի կոչելու նպատակով՝ սույն տարեկան ծրագրում ներառվել են համապատասխան միջոցառումներ:

24. Հասարակության իրազեկության բարձրացման նպատակով՝ հաշմանդամության հիմնախնդիրները պարբերաբար լուսաբանվել են հեռուստատեսությամբ՝ նախարարության մասնագետների և ոլորտում գործող շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից:

25. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է այլ հանրապետական գործադիր մարմինների, տարածքային ինքնակառավարման

մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

IV. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

26. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես՝

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի ընդունում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման մեխանիզմների ներդնում,
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրից բխող միջոցառումների իրականացում,
- հաշմանդամության գնահատման համակարգում նոր սկզբունքների և մոտեցումների ներդնում:

27. Բոլոր ոլորտներում իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման և կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

28. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում 2018 թ. Տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները ուղղված են այդ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը, հասարակություն ներառելու, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու և հավասար հնարավորություններ ապահովելու, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական գործընթացն առավելագույնս արդյունավետ կազմակերպելու, հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական կրթության ու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծմանը:

29. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2018 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 12 հիմնական ուղղություններով:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN p/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ**				
1.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու նպատակով՝ գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ նոր իրավական ակտերի ընդունում:	ՀՀ նախարարություններ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Գերատեսչությունները Կոնվենցիայի պահանջների տեսանկյունից վերանայում են իրենց ոլորտի իրավական ակտերը, մշակում են փոփոխությունների կամ լրացումների անհրաժեշտություն ունեցող իրավական ակտերի ցանկը՝ ըստ առաջնահերթությունների և կատարման ժամկետների: Անհրաժեշտության դեպքում ՀՀ կառավարություն են ներկայացնում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ օրինագծեր:
1.2.	Հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատում և հաշմանդամության սահմանում՝ ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա

2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում**				
2.1.	Կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների մշակման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ-ների ներգրավում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2018 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների վերաբերյալ նորմերի ամրագրում ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ների մասնակցություն՝ մատչելիության նորմերի համապատասխանության որոշարկման գործընթացին
2.2.	ՀՀ պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների մշակման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ների ներգրավում:	ՀՀ պետական կառավարման մարմիններ	2018 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	
2.3.	Գոյություն ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերում և շինություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների գնահատման ձևաչափի մշակում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	2018 թ. մայիս	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Գնահատման ձևաչափի առկայություն
2.4.	Գնահատման ձևաչափի հիման վրա գոյություն ունեցող շենքերի և շինությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների գնահատում	Շահագրգիռ նախարարություններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2018 թ. հունիս-հոկտեմբեր	Օրենքով չարգելված միջոցներ	Հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների մատչելիության վերաբերյալ տեղեկատվության առկայություն

2.5.	Շենքերի և շինությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված աշխատանքների ժամանակացույցի մշակում և հաստատում	Շահագրգիռ նախարարություններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2018 թ. նոյեմբեր – դեկտեմբեր	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Ժամանակացույցի առկայություն՝ ըստ առաջնահերթությունների՝ հաստատված տվյալ մարմնի ղեկավարի կողմից (հրաման, որոշում)
2.6.	Քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու առաջնահերթությունների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և անհրաժեշտ պայմանների ապահովման ծրագրի մշակում	ՀՀ արդարադատության նախարարության	2018 թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Ըստ առաջնահերթության, ազատազրկման վայրերում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների բավարարելու նպատակով համապատասխան պայմանների ապահովում
2.7.	Երևանի փողոցների խաչմերուկներում և բանուկ մասերում թեքահարթակների կառուցում, ինչպես նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար մատչելի պայմանների ապահովում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Երևան համայնքի բյուջե	Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում
2.8.	Ներքաղաքային և միջքաղաքային երթուղիներում շահագործվող ավտոբուսների վրա հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ վերելակային հարմարանքների և ավտոբուսների ուղեսրահներում կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքերի տեղադրում	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ համայնքապետարաններ (համաձայնությամբ)	2018 թ.	Համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում
2.9.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ համայնքապետարաններ (համաձայնությամբ)	2018 թ.	Համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ միջոցներ	Տվյալ տարում ձեռբերվող տրանսպորտային միջոցները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար

2.10.	Էլեկտրոնային կայքէջերի հասանելիության ուղեցույցի մշակում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	Օրենքով չարգելված այլ միջոցներ	Կայքէջերում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով տեղեկատվություն ստանալու հնարավորությունն ապահովելու համար ուղեցույցի առկայություն
2.11.	Իրավիճակային օգնության տրամադրման ուղեցույցի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Սոցիալական և հանրային նշանակություն ունեցող հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակային օգնություն տրամադրելու համար համապատասխան ուղեցույցի առկայություն: Ուղեցույցը պարունակելու է դրույթներ, թե ինչպես պետք է ապահովել տվյալ իրավիճակում կոնկրետ խնդրով հաշմանդամություն ունեցող անձի հաղորդակցումը, տեղաշարժը և այլն: Այն հիմք կհանդիսանա հաշմանդամություն ունեցող անձին մատչելի ձևով ծառայություն մատուցելու համար:
3.	**Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր**				
3.1.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (797 399. 5 հազ. դրամ)	Շուրջ 2000 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատում

3.2.	Հատուկ կրթության կազմակերպում 17 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ	2018 թ.	ՀՀ պետական բյուջե /2 750 738.9 հազ. դրամ/	Շուրջ 1900 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպում
3.3.	Հանրապետության 202 (տարեվերջին՝ 151) հանրակրթական դպրոցում ներառական կրթության կազմակերպում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ մարզպետարաններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (3 196 081.4 հազ. դրամ)	Միջին տարեկան հաշվարկով շուրջ 5800 երեխայի համար ներառական կրթության ապահովում
3.4.	Հանրակրթական դպրոցների և նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հանրակրթական դպրոցերի ուսուցիչների վերապատրաստում ներառական կրթություն իրականացնելու համար
3.5.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (14 880.0 հազ. դրամ)	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում համապատասխան մեթոդաբանությամբ և ծրագրերով, ուսումնական նյութերով ապահովում
3.6.	Միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում անվճար հիմունքներով կրթության ապահովում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամու-թյուն ունեցող և հաշմանդամ

					երեխայի կարգավիճակ ունեցող անձանց անվճար հիմունքներով կրթության կազմակերպում
3.7.	Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների պատրաստում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող՝ մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների առկայություն
3.8.	Բարձրագույն ուսումնական հաստատություններում ներառական կրթության համակարգողների ներդրում, որոնք կաջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ուսումնական գործընթացի կազմակերպմանը	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)	2018 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բարձրագույն ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիների նախանշում
3.9.	Դպրոցներում երեխաների որոշակի հմտությունների ձեռքբերմանը և մասնագիտական կողմնորոշմանը նպաստող արհեստանոցների ստեղծում (փայտամշակում, կար ու ձև, գորգագործություն, կավագործություն)	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Աշխատանքային հմտությունների ձեռքբերում և մասնագիտական կողմնորոշման նպաստում
4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր**				
4.1.	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (7 300.0 հազ. դրամ)	80 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում
4.2.	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (6 600.0 հազ.դրամ)	80 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում
4.3.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցություն տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (70 113.34 հազ. դրամ)	300 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում

4.4.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (1 000.0 հազ. դրամ)	500 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում
4.5.	«Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցում զբաղվածության աջակցման կենտրոնում»	ՀՀ աշխատանքի և սոցիալա-կան հացերի նախարա-րություն «Ունիսոն» հատուկ կարքներով մարդկանց աջակցության ՀԿ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե, (9 777.9 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում
4.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018 թ.	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար աջակցության ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Երևան համանքի բյուջե	Հաշմանդամութուն ունեցող անձանց սոցիալական աջակցության տարբեր ծրագրերի միջոցով կարիքի բավարարում, սոցիալական վիճակի բարելավում
5.2.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի և սպասարկման իրականացում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 70 %/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (1 504 143.6 հազ. դրամ)	850 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում
5.3.	Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման իրականացում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (40 553.8 հազ. դրամ)	Շուրջ 500 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում
5.4.	Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում «Զորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (13 650.1 հազ. դրամ)	20 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոնում

5.5.	Տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 34 %-ը/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (72 390.6 հազ. դրամ)	1190 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում
5.6.	Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Փրկություն» ՀԿ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (24 աշխատողի աշխատավարձի վճարում) (31 401.2 հազ. դրամ)	Մտավոր խնդիրներ ունեցող ամսական միջինը 50 հաշմանդամություն ունեցող անձի ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում
5.7.	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Լիարժեք կյանք» ՀԿ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (13 աշխատողի աշխատավարձի վճարում) (11 555.7 հազ. դրամ)	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի ամսական միջինը 60 շահառուի սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում:
5.8.	18 տարեկանից բարձր տարիքի աուտիզմ ունեցող անձանց զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն կենտրոն (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (30 աշխատողի աշխատավարձի վճարում) (32 800.3 հազ. դրամ)	Շուրջ 80 աուտիզմ ունեցող անձանց հնարավոր զբաղվածության և սոցիալական ներառման ապահովում
5.9.	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթևեկելու համար վկայականների տրամադրում	ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (200.0 հազ. դրամ)	1-ին և 2-րդ խմբի հաշման-դամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրա-տրանսպորտով անվճար երթևեկության ապահովում
6.	**Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական օգնության և վերականգնողական ծրագրեր**				
6.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված-ներին բժշկական օգնության ծառայու-թյուններ» և «Դեղորայքի	Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում նաև վերականգնողական ծառայությունների մատուցում, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում,

				տրամադրում ամբուլա-տոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրերի հատկացումների շրջանակներում:	հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացում
6.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով	ՀՀ առողջապահության նախարարություն	2018 թ.		Դեղերի տրամադրման գործընթացի արդյունավետության բարձրացում (դեղերի տրամադրում անձի կարիքին համարժեք), հաշմանդամություն ունեցող անձանց դեղերով ապահովում
6.3.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում «ԱՐԹՄԵԴ» ԲՎԿ-ում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (181 562.2 հազ. դրամ)	818 հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնում հիվանդա-նոցային պայմաններում
6.4	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացում՝ հիդրոթերապիայի, հիպոթերապիայի, արտթերապիայի միջոցով	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) «Հայ մայրեր» Հ/Կ (համաձայնությամբ)	2018 թ.	Երևան համայքի բյուջե	Միայնակ մայրերի՝ հաշման-դամություն ունեցող երե-խաների առողջության վերականգնում
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներով ապահովման ծրագրեր**				
7.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում, դրանց վերանորոգում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (828 192.4 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 10 094 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրում, վերանորոգում,
7.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց սայլակներով և հաշմանդամություն ունեցող անձանց ու տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց լսողական սարքերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (82 278.0 հազ. դրամ)	ԱՊՀ երկրների արտադրության կամ դրան համարժեք լսողական սարքեր, հաշման-դամի սայլակներ, մինչև 12 տարեկան երեխաների համար լսողական ներդիրի ձեռքբերում:

7.3.	Լսողության խնդիր ունեցող 12-18 տարեկան երեխաներին և հաշմանդամություն ունեցող երիտասարդներին լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (16 000.0 հազ. դրամ)	Լսողության խնդիր ունեցող 12-18 տարեկան երեխաներին և հաշմանդամություն ունեցող երիտասարդներին (18-29 տարեկան ներառյալ) լսողա-կան սարքերի ձեռքբերման համար 200 հավաստագրերով ապահովում
7.4	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ /Բրայլյան/ տառատեսակով գրքերի, տետրերի, բյուլետենների տպագրում և «Խոսող գրքերի» ձայնագրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (9 786.6 հազ. դրամ)	74400 թերթ ՀԿՄ օրգան ամենամյա «Բյուլետեն» ամսագրի, 30000 թերթ Բրայլյան գրքի, 320 հատ բրայլյան տետրի տպագրություն և 1600ժամ տևողությամբ «Խոսող գիրք»-ի ձայնա-գրություն
8.	**Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակություն մշակույթի և սպորտի միջոցով**				
8.1.	Կույր և թույլ տեսնող անձանց համար գրադարաններում տեղեկատվություն ստանալու և հաղորդակցման ապահովում «Արև» ծրագրի միջոցով	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Կույր և թույլ տեսնող անձանց համար գրադարաններում «Արև» ծրագրով համակարգիչների, ինչպես նաև խոսող գրքերի առկայություն
8.2.	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում ՀՀ մարզերում	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
8.3.	Թանգարաններում, գրադարաններում մշակութային ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Շահագրգիռ ՀԿ-ներ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին ակտիվ մասնակցության ապահովում

8.4.	Թանգարաններում տեսողության խնդիրներով այցելուների համար աուդիոգիդ ծառայության մատուցում	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Տեսողության խնդիրներով այցելուների համար արգելոց-թանգարանների տարածքներում աուդիոգիդ ծառայության միջոցով էքսկուրսիաներ
8.5.	Թատրոններում լսողության խնդիրներ ունեցող անձանց համար սուրդո ծառայության ներդրում	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովում
8.6.	Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե(102 286.5 հազ.դրամ)	Հաշմանդամ, առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար արվեստի և արհեստների (12 մասնագիտություն) անվճար ուսուցում
8.7.	Մանկապատանեկան ներառական հանրապետական փառատոնի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող երեխաների ու պատանիների ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում
8.8.	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակեր-պությունների ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցություն (ցուցահանդեսների, համերգների, փառատոների, մրցույթների և այլ մշակութային ծրարգրերին մասնակցություն)	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2018 թ.	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում
8.9.	Պետական աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ մատուցելու նպատակով	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2018 թ.	ՀՀ պետական բյուջե (9 000.0 հազ. դրամ)	Հաշմանդամային սպորտով զբաղվող «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակեր-

					պություն», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարա-կական կազմակերպություն-ներին պետական աջակցության ապահովում՝ զանգվածային-մարզական միջոցառումներ անցկացնելու և միջազգային մրցաշարերին մասնակցելու համար
8.10.	«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ՝ սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների համար	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2018 թ. հուլիս-սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե (7 200.0 հազ. դրամ)	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում հասարակություն
8.11.	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2018 թ. օգոստոս	ՀՀ պետական բյուջե (16 945.3 հազ. դրամ)	
8.12.	Կորեայի Փյոն Չան քաղաքում կայանալիք ձմեռային պարալիմպիկ խաղերին ՀՀ պատվիրակության մասնակցության ապահովում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	2018 թ. մարտ	ՀՀ պետական բյուջե (6 868. 6 հազ. դրամ)	Ձմեռային պարալիմպիկ խաղերին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցություն
8.13.	Երևանում կայանալիք խուլերի պատանիների ամառային առաջին սուրդլիմպիկ խաղերի անցկացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազ-մակերպություն (համաձայնությամբ)	2018 թ. հոկտեմբեր	ՀՀ պետական բյուջե (14 707. 0 հազ. դրամ)	Երևանում կայանալիք խուլերի պատանիների ամառային առաջին սուրդլիմպիկ խաղերի կազմակերպում:

8.14	Երևան քաղաքի սպարտակիադայի կազմակերպում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ	Երևանի քաղաքպետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում հասարակություն սպորտի միջոցով
8.15.	Հատուկ դպրոցների աշակերտների համար ֆուտբոլի մրցաշարի կազմակերպում.	Երևանի քաղաքպետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Երևան համայնքի բյուջե	
9.	**Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն**				
9.1.	«Հաշմանդամություն ունեցող անձանց վարվելա-կերպի կանոններն արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում» թեմայով դասընթացների կազմակերպում հաշմանդամություն ունեցող անձանց համար	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության	2018 թ.	Ֆինանսավորում չի պահանջում, օրենքով չարգելված այլ միջոցներ	Արտակարգ իրավիճակ-ներում հաշմանդամություն ուեցող անձանց իրազեկ-վածության բարձրացում
9.2	Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման պլանավորում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության	2018 թ.	Ֆինանսավորում չի պահանջում, օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման բարձրացում
9.3.	ՀՀ արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգի մեջ հատուկ ազդանշանների ներդնում լսողության և տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության	2018 թ.	Օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգության ապահովում իրենց համար մատչելի ձևաչափով
10.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև**				
10.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրագործում, հանդիպումների և քննարկումների կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Ֆինանսավորում չի պահանջում	Պետական և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնում և խթանում
10.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային և մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովների աշխատանքների իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով Հաշմանդամություն ունեցող	2018 թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման գործընթացի խթանում

		անձանց հարցերով զբաղվող մարզային (Երևան քաղաքի) հանձնաժողովներ (համաձայնությամբ)			
11.	**Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**				
11.1.	Տարբեր ոլորտներում վարվող տեղեկատվական համակարգերում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության ներառում	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2018 թ.	Ֆինանսավորում չի պահանջում	Բոլոր ոլորտներում հավաքագրվող տեղեկատվություններում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության տարանջատում ըստ սեռի, տարիքի, բնակության վայրի
12.	**Հանրային իրազեկում**				
12.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի և դրանց կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ հանրության իրազեկում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018 թ.	ՀՀ պետական բյուջե («Հանրային իրազեկ-ման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում) Երևան համայնքի բյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և դրանց կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների լուսաբանում՝ գրքույկների, բուկլետների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների կազմակերպում, հոդվածների տպագրում